№ 26 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍ 22

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍ 22 № 26

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղռան, կէս տարուանը 6 ղռան: Առանձին համարները 5 շահի:

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի:

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուա համար 1 շահի: Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:
Նամակները, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Շաւիղի» Խմբագրութեան կողմից Ռաշտի աղաներին.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեկարգիչ թէ չար և քանդիչ. Նամակ Արաբիլից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Կովկասից. Նամակ Կովկասից.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Ի՞նչ է Հայրենիքը:

«ՇԱՒԻՂԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ՌԱՇՏԻ ԱՂԱՆԵՐԻՆ

Ռաշտի ուսուցիչն ու ուսուցչուհին, մի քանի միամիտ կանանց ստորագրութիւնը կորզելուց յետոյ յօգուտ իրենց, յաջողել են չորս հոգաբարձուների էլ ստորագրել տալ իրենց գրած մի բողոքի տակ*) որ տպած է «Արձագանքում» և որտեղ զրպարտութիւն է համարում այն բանը, որ իբր թէ ուսուցիչն և ուսուցչուհին ամէն կէրակի դայլրով և կարմոնով քէֆ են կազմում դպրոցի բագում (օիորդաց)և մասնակցեցնում աշակերտուհիներին, իսկ դրան հանդիսատես են լինում ուսուցչի պարսիկ աշակերտները. ուստի աւելի պարզաբանելու համար համարձակօրէն տըպում ենք այն ինչ որ մեր թղթակիցը ասել է, որ «դրացիները պատմում են», իսկ մեր գլխաւոր աշխատակիցը, որ անցել է Ռաշտից, մասնաւորապէս մեզ գրում է հետեւեալ խօսքերը. «երեկ երեկոյ մէկի տանն էի, այնտեղ հաւաքուել էին 10—15 Ռաշտեցիներ, ի թիւս որոց և երիտասարդներ (որոնց անունը տալիս է), տան տէրը համարձակ կերպով պատմում էր, որ ուսուցիչն ու ուսուցչուհին դայլրով և գարմօնով աշակերտուհիների հետ, օրիորդաց դպրոցի բագում քէֆ են սարքում, գինի և օղի էլ ունենում են և այդ քէֆին հանդիսատես են ուսուցչի պարսիկ աշակերտները: Այս ամբաստանութիւնը նա անում է համարձակ բոլոր պատասխանատուութիւնը իր վրայ վերցնելով. դրա վրայ աւելացնում էր ուսուցչի շատ ուրիշ աւելի զզւելի արարքներն էլ և երևակայէք, որ ներկայ եղողները ոչ միայն դէմ չէին խօսում, այլ իրենք էլ մի մի բան աւելացնում էին և հաստատում նրա ասածները: Եւ ինչպէս չը հաւատալ: Վերագրէլ այդ համաձայնութիւնը այն բանին, որ ներկայ եղողները սուտը պաշտպանում էին որպէս խնկութիւն՝ տան տիրոջ հաճոյանալու համար միայն. թէ իրականութիւն համարել պատմածները: Ամենայն դէպս, երբ ես հանդիսաւորապէս յայտնեցի որ կը գրեմ ասածները և որ բոլոր պատասխանատուութիւնը նրա վրայ եմ թողնում, նա նոյնպէս հանդիսաւորապէս ասաց որ ընդունում է, որ կը հաստատի: Այս բոլորին վկաներ էին 10—15 անձինք, որոնց կը թուեմ պէտք եղած ժամանակ»....

Ահա մեր գլխաւոր աշխատակցի դըրածը: Եւ դրանից յետոյ Ռաշտի գանագան Տատուրները ու Աղաւելները—այդ իսկապէս անդրջրհեղեղեան գանգերը—գրգռուել են, որ իրենց պաշտպանած ուսուցչին, իրենց տանը լաւ թէյ պատրաստող և հոսոսութեամբ ազգասիրական ֆրազներ կլկնող (բեմից սովորած) վարժուհին՝ դիմակազերծ են լինում:

Ամօթ չէ՞ Ռաշտեցոց համար, որ Կովկասին այդքան մօտիկ տեղում և այդպիսի լաւ նիւթական միջոցով, մի տիրացու ու մի տիրացուհի են պահում, որոնց մասին այնքան վատ խօսքեր են պատում և որոնք հին խալիֆաներն են յիշեցնում:

Հ. Գ.

*) Ինչու չը ստորագրել բոլոր հոգաբարձուները միասին, եթէ նրանց պաշտպանած դատը արդար է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԿԱՐԳԻՉ, ԹԷ ՉԱՐ ԵՒ ՔԱՆԴԻՉ

Համբերել, լուռ կենալ, այլ ևս անկարելի է, մինչև ե՞րբ պէտք է կուրութեամբ հետեւենք այս սևագլուխ պարտաւորներին, մինչև ե՞րբ պէտք է վէրքներս ծածկենք, այնքան ծածկեցինք որ վարակեց մի ամբողջ բանակ մի ամբողջ տարր. էլ բաւական է եղբարք որքան թագցրիք, բացէք վէրքները դիմէք բժշկի շուտափոյթ օգնութեան. դարման տարէք քանի դեռ ուշ չէ:

Լոյս աշխարհ բերէք այդ մութ խորշերում գործողներին, իրենց այլանդակ գոյներովը հանդերձ. թողէք ժողովուրդը տեսնի ու ճանաչի իրան թշուառութիւն պատճառող բախտախնդիրներին, էլ բաւական է որքան կոյր մնացինք, տեսածներս չի տեսած համարեցինք, լսածներս չի լսած:

Յանուն ճշմարտութեան լոյս աշխարհ դուրս բերէք այդ ժողովրդի ցեցերին ու ազգավնաս գործիչներին. լինի դա հոգևորական, աշխարհական պաշտօնեայ, կամ այլ ինչ միևնոյն է:

Թող ուրիշները լռեն, համբերեն ո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԷ Ի՞ՆՉ Է ՀԱՅՐԵՆԻՔԸ

(Է. Սուվեստրը)

Հայր Զօֆուռը արդէն ծերացել էր և նրա մարմնի գլխաւոր անդամները խորտակուել էին:

Նրա մի ձեռքն ու մի ոտքը արդէն վաղուց էր որ մեռացել էին կատարելու իրենց դերը, բայց մի և նոյն ժամանակ նա դեռ պահպանել էր իր առողջ կերպարանքը և քաջութիւնը: Նրա խրոխտ ձայնը լսելիս իսկոյն կարելի էր երևակայել, որ այդ խորտակուած մարդը մի ժամանակ քաջ զինուոր էր եղել:—Թէև բերդը դրսից մի քիչ քայքայուել է, ասում էր նա, բայց դեռ բերդապահ զուռը անվնաս է:

Ցիրաւի որ նա մի քաջ զինուոր էր եղել և պատերազմներում էր կորցրել իր ձեռքը և ոտքը: Նա պարծենալով էր պատմում իր զինուորական արկածները և պատմելիս այնպէս էր խրախուսվում, որ կարծես թէ 20 տարեկան երիտասարդ լինէր:

—Զինուոր եղել էք, հայրիկ. հարցնում եմ Զօֆուռից երբ առաջին անգամ էի ծանօթանում նրա հետ:

—Հըմ, այո, ասաց նա, ոլորելով իր բեխերը. հասարակապե տական կուլի ժամանակ ես երրորդ Թնդանօթաձիգ զօրաբաժնում էի գտնւում: Ես եղել եմ Ժեմապում և Վաթէռլօում. մի խօսքով ասած, ես ներկայ եմ եղել մեր փառքի ծնունդից մինչև թաղման:

Ես զարմացած նայում էի նրան:

—Բայց Ժեմապի կռւում դուք քանի՞ տարեկան էիք հարցնում եմ նրան:

—Մօտաւորապէս 15 տարեկան:

—Եւ այդ հասակում, դուք արդէն զինուորական ծառայութեան գաղափարը ունէի՞ք:

—Այդ ես չէի հասկանում այն ժամանակ, միայն ծառայում էի խոհանոցներում առանց մտածելու, որ հայրենիքս ինձնից պահանջում էր մի աւելի մեծ գործ. բայց Վինառում ես ունէի մի ծերունի հօրեղբայր՝ մի քաջ զինուորական, որի անդամները իմիս վիճակի մէջ էին: Նա մի գիտնական և փորձուած մարդ էր որ հեշտութեամբ չի կարելի գտնել: Քանի՜ տարիներ էին, որ նա զինուորական ծառայութեան մէջ էր, բայց նա դեռ տասնապետ էր, որովհետև այդ ժամանակ աստիճանները շատ չէին բարձրանում:

Ես երբեմն գնում էի նորա մօտ և նա ինձ տալիս էր այնպիսի խրատներ, որոնք երբէք իմ մտքից դուրս չեն եկել:

Մի անգամ էր երբ ես գնացի նորա մօտ այցելութեան, այս անգամ նորան տխուր և լուրջ դրութեան մէջ գտայ:

—Ժեռոմ, ասաց նա ինձ յուզուած ձայնով, գիտե՞ս, ինչ է այնց կենում սահմանագլխում:

—Ոչ տասնապետ, պատասխանեցի ես:

—Հը՜մ... գիտե՞ս որդեակ, ասաց նա, հայրենիքը վտանգի մէջ է և մօտ է նորան կորուստը. պէտք է օգնութեան հասնել նորան. Հայրենիքը օգնութիւն է կանչում և պէտք է շտապել: Ա՜խ... եթէ ես ունենայի քո ոտքերըդ և ձեռներդ այժմ այստեղ մի անպէտք առարկայի պէս ընկած չէի լինել: Գնա՜, որդեակ, գնա՜ կռւիր հայրենիքիդ համար:

Արտասանելով այդ խօսքերը՝ երկու կաթիլ արցունք դուրս ցայտեցին ծերունի հօրեղբօր աչքերից և գլորեցան նորա թարշամաց այտերի վերայ:

Բայց ես լաւ չէի հասկանում նորան և նորա խօսքերը ինձ համար շատ մութ էին: Ծերունին նկատեց այդ:

—Գուցէ դու չըգիտես դեռ թէ ինչ է հայրենիքը շարունակեց նա ձեռքը դնելով իմ ուսիս վերայ: Ուրեմն լսիր: Ամեն ինչ որ քեզ շրջապատում է, ինչ որ քեզ սնունդ է տալիս, ինչ որ դու սիրում ես, այս գիւղը, այս տները և ծառերը, որ դու տեսնում ես. այս երիտասարդ աղջիկները, որ խայտալով անցնում են, այս գիւղացիները, որ աշխատում են, Օրէնքը, որ քեզ դատում է և պաշտպանում, այն ուրախութիւնը և տխրութիւնը, որ դու ունենում ես մարդկանց հետ: Այն սենեակը որտեղ դու տեսել ես քո մօրը, այն յիշողութիւնները, որ նա քեզ թողել է և գետինը որտեղ նա հանգչում է, այդ բոլորը հ ա յ ր ե ն ի ք ն է: Նորան ամեն տեղ տեսնում ես և ամեն տեղ շնչում, երևակայիր, որդեակ. քո բոլոր իրաւունքներդ, պարտականութիւններդ, պէտքերդ, յիշողութիւններդ և երախտագիտութիւնդ՝ այդ բոլորը միասին կազմում են մի սուրբ խառնուրդ, որին կոչում են Հ ա յ ր ե ն ի ք:

Հօրեղբայրս ասում էր այդ բոլորը մի այնպիսի ոգևորութեամբ, որ ես կանգնած դողդողում էի և արցունքս ինքնակամ հոսում էր իմ աչքերից:

—Հասկացայ, աղաղակեցի ես: Վերջապէս դա աշխարհի այն մասն է, որի հետ Աստուած կապել է մեզ հոգով և մարմնով: Դա մի մեծ ընտանիքէ, որին՝ անդամներ ենք մենք: Եւ այդ ընտանիքին վտանգ է սպառնում և մեր սուրբ պարտականութիւնն է նորա առաջը առնելու և չթողնելու արատաւորել այդ ընտանիքի պատիւը, որը միևնոյն ժամանակ մերն է: Ուրեմն մնաս բարև, սիրելի հօրեղբայր, շնորհակալ եմ որ ինձ հասկացրիր իմ սուրբ պարտականութիւնը: Ես գնում եմ կռուելու մեր ընտանիքի պատւի համար:

Եւ հենց այդ օրը կամաւոր զինուոր մտայ հ ե տ ի ո տ զօրաբաժնում:

Թէհրան 10 յուլիս 95

Թարգ. Ներսէս Ջահրագլխանեան

ըունք, որ անտարբեր են. սակայն մենք, որ անձամբ ականատես ենք և սկզբից մինչև այժմ քայլ առ քայլ հետևել ենք դորանց նիստ ու կացին, ծանօթենք գործքերի հետ, միթէ խղճի դէմ մեղանչած չենք լինել եթէ լռենք, համբերենք, չը գրենք գոնեա որքան մեր թոյլ գրիչը կը զօրէ, չը բողոքենք ուր հարկն է, օհ այն ժամանակ աններելի յանցանքների մեղսակիցը կ՚համարուենք մենք։ Ոչ, ոչ պիտի բողոք բառնանք. ճնշուած ժողովուրդի ձայնը լսեցնել տանք։

Իսկ դուք յարգելի պարոնայք, որ Ձեզ սկզբունք էք վերցրել թշուառի, ճնշուածի պաշտպանութիւնը, լիայոյս եմ որ տեղ կը տաք պատուական թերթիդ էջերում զետեղելու մեր արդարացի բողոքին։

Տաճկահայաստանում, հայ տարրը ճնշվում հարստահարվում է բարբարոս ցեղերից, իսկ այստեղ մեզանում նոյն համանման ճնշումն, հարստահարութիւնը կատարվում է մեր հոգևորականութեան ձեռքով։ Զրկանքը միևնոյն է, տարբերութիւնը հայ հոգևորականի և քուրդ աւազակների մէջն է միայն։ Այստեղ փոխանորդի, բարեկարգիչի անունով ընկած մարդիկն էլ չարութիւն, զրկանք չը մնաց որ չ՚անեն մեր այս խղճուկ գաւառներում, իսկ այնտեղ գործւում է ամէն բան տարբեր ձեռքով, ուրիշ անուան տակ։

Սակայն դառնանք նամակիս շարժառիթին։ Երբ Յովհաննէս. Մ. Բագունին եկաւ Ղարադաղ իբրև բարեկարգիչ, բոլոր գիւղերը պտտեց, շրջեց, բայց ինչ, կարծում էք թէ բարեկարգութիւն արեց, յորդոր կարդաց ուսման համար կամ թէ հոգևոր մխիթարութեան քարոզներ խօսեց. ոչ, ոչ, քաւլեց, ահա թէ ինչ արեց. մի քանի գիւղերից փողեր առեց ուսումնարաններ շինելու խոստումով, մի քանիսից էլ կորզեց եկեղեցիներ շինելու խոստումով մի քանի մարդկանցից էլ տուգանք առաւ թէ այս ինչ թւին չըհաս է եղել ձեր ամուսնութիւնը. վերջապէս մի քանի ծերունի քահանաների էլ փիլոնազուրկ անելով տուգանք առեց ապա կրկին յետ տուեց փիլոնները, միայն խիստ պատուիրելով որ այսուհետև առանց հոգեբաժնի մեռել չը թաղեն, և ննջեցեալի վերայ ձգուած աշխամբոլը ու մատաղների մորթէքը անմիջապէս իրեն ղրկեն, որովհետև Ղարադաղում այդ սովորութիւնը կայ, ննջեցեալի վերայ աշխամբոլը է գցվում յուղարկաւորների կողմից և այդ աշխամբոլը տրվում էր քահանաներին. իսկ այժմ համաձայն խիստ պատուէրների տրվում է վարդապետին նոյնպէս և մատաղների մորթէքը։

Վերջապէս իւր արշաւանքը վերջացնելով հայր Բագունին, վերադարձաւ ազգային գիւղը նորաշէն և այնտեղ հաստատեց իւր իշխանական աթոռը, ապա սկսեց իւր շրջաբերականները հրատարակել, շրջաբերականների մէջ ասում է ի միջի այլոց, որ այրիները չի պիտի ամուսնանան կոյսերի հետ թէկուզ այդ կոյսը լինի 40—50 տարեկան, հակառակ դէպքում խիստ կը պատժուին օրինազանցները և քանիսը մեր ներկայութեամբ մերժեց, ժանդգնողին պատժեց, ի հարկէ դուգանքով։ Այժմ երևակայեցէք թէ ժողովուրդի արդար գանգատը որ աստիճանի է հասել, ժողովուրդը իրաւացի կերպով պահանջում է, որ եթէ վերոյիշեալ եկամուտները քահանաներից խլուեց գոնէ յատկացուի եկեղեցուն կամ որևէ մի բարենպատակ գործի։ Իսկ եթէ հայր սուրբը պնդում է որ եկեղեցուն կամ ուսումնարանին պիտի յատկացուի շատ բարի. բայց ո՞ւր է, ո՞ր մատեանում է մի առ մի գրվում ստացուածները և ո՞րտեղ է գտնւում ստացուած փողերը. ահա հարցը։

Նախընթաց նամակով արդէն գրել էինք, որ շուտափոյթ հեռայնեն սորան բայց մտածում եմ չի լինի թէ առիթից օգտւելով փախուստ տայ այդ անպիտանը, առանց հաշիւ տալու ստացած դրամների համար, բայց ինչ եմ տեսում երանի թէ այդպէս էժան պրծնէինք, այնքան լինի որ շուտով ազատուենք այդ դիշակերի ճանկերից։

Վերագրածներիս ճշմարտութեան երաշխաւոր կը կոչեմ իբրև արդար դատաւոր այս տարւայ Ղարադաղի ուխտաւորներին և մանաւանդ ամառանոց ազատակների հարուած տալիս։ Ներկայ եկողներին, որոնք մասնաւորապէս ծանօթացան դորա գործքի ու ընթացքի հետ և յանձին յարգելի հոգաբարձու Թաւրիզու պ. Ա. Տ. Օհանեանցին, որի ներկայութեամբ կատարւել է հետևեալ դէպքը։

Հայր սուրբը բանտարկում է մի խեղճ մարդու էշը, ապա պահանջում է 5 ղրան որ էշին ազատութիւն շնորհէ. յայտնի բան է այդ բոլորովին անիրաւացի պահանջի դէմ, գիւղացիների մեծամասնութիւնը գազազում է ապա յարձակվում բանտից էշին դուրս բերում, հայր սուրբը տեսնելով այդ, իւր կատաղութիւնը չէ կարողանում զսպել, իսկոյն կանչում է իւր մօտ* էշատէր գիւղացուն և ամենա անվայել լիշոցներով յարձակվում է խեղճի վերայ, եղողները հազիւ հազ ազատում են խեղճին բարբարոսի ձեռքից, երբ գոհին ազատում են ձեռքից, սկսում է գազանի պէս գոռալ ամեն տեսակ լկտի և զզվելի լիշոցներ, հայհոյանքներ թափել ամբողջ գիւղացոց վերայ, «շուներ անզգամներ, ձեր հայրը... ձեր մայրը Լայլն Լայլն. դուրս կորէք գիւղիցս բոլորդ լըբերէք.... ես պիտի աւերակ դարձնեմ այս գիւղը Լայլն»։

Ճշմարիտ ասած ես երբէք չէի սպասում որ մի տարիքը անցած ծերունի այդ չափ լրբաբար լիշոցներ թափի իւր բերանից, այն էլ հոգևորական։

Բայց պէտք է փակագծի մէջ ասել, որ վերոյիշեալ պարոնը այդ բոլոր անիրաւացի խայտառակութիւնը տեսնելուց յետոյ ոչ մի բառ չասեց հայր սուրբին զգուշացնելու համար, որ այդպէս անկարելի է ժողովուրդի հետ վարուել։ Թողնենք այն, որ իւր աչքի առաջ բռնի կերպով անվարձ աշխատեցնում է խեղճերին սոսկ իւր քմահաճութեանը, առանց նկատի ունենալու որ արտերը հասել են վաղուց և հնձող են կանչում, երեխան լացում հաց է ուզում, բայց այդ բոլորին բաւականութիւն տուող միակ աշխատաւոր ձեռքը զբաղուած է մի վարդապետի քմահաճոյքին ծառայելուն։

Այժմ թողնում եմ ձեր դատողութեան սիրելի ընթերցող, ինչ անուն կը տաք դորանց բարեկարգիչ, թէ չար և քանդիչ։

Ղարադաղ. 30 յունիս 95

Սև Լեռնեցի.

ՆԱՄԱԿ ԱՐՏԱԲԻԼԻՑ

6 յուլիս 95

Տեղւոյս հոգաբարձութեան անդամներից երկուսը հրաժարւեց. յունիս 25-ին մի ժողովի ներկայութեամբ ընտրւեցին պ. պ. Հ. Մ. Մնացականեանց, Ս. Եզանեանց և Ա. Էլչիբէգեանց վերջինս պիտի վարէ նաև երէցփոխութեան պաշտօն։ Առաջինների հետ մենք արդէն ծանօթ ենք... Մենք թէ բերանացի և թէ «Շաւիղի» միջոցաւ քանի անգամ ակնարկել ենք տեղւոյս գրադարան ընթերցարանի ողորմելի դրութիւնը. բայց միշտ անուշադիր է մնացել. վերջին խօսք մի էլ պարոններին, մեծ մասամբ պ. Ա. Էլչիբէգեանցին։ Մենք «Շաւիղի» № 7-ում ասացինք. որ քանի տարի առաջ՝ տեղացի և օտարական երիտասարդների անդամակցութեամբ հիմնւեց մի գրադարան ընթերցարան բերել տալով 200-ի չափ ընտիր գրքեր. թէ ինչ դրութեան մէջ էր այդ գրքերը, միայն մենք գիտէինք. բայց պէտք է խոստովանւել այժմ աւելի թշւառ դրութեան մէջ են գտնվում։ Անմահ Հիւգօի, Տիւմաի, Ժիւլ-վերնի, Եօժէնսիւի և այլն բոլոր կարգի հեղինակների գրւած քրտնաթոր երկերը, այժմ փակւած են կտուց անապատի բորբոսնած նկուղի մէջ։ Ինչ անել այդպիսիների դէմ։ Մինչ գեռ գրքերը լինում էին ընթերցարանում, դարձեալ յաւ էր. թէև գողացւում պատառոտւում էր, էլի կարդացվում էր։ Այդ մասին «Շաւիղի» միջոցաւ մենք բողոքեցինք, որպէսզի գրադարանը՝ ինչպէս այլ քաղաքներում կարգի ընկնի, զղջացինք. «Շաւիղի» մի նկատողութեան ազդեցութեամբ գրքերը վեր առին և փակեցին եկեղեցու մի մթին խոնաւ խորշում, ահա երեք ամիս է որ փակւած ապաշխարում են. եթէ տաղանդաւոր հեղինակը յարութիւն առնէր և այցելէր տեղւոյս եկեղեցին՝ նա կը լսէր մթին խորշերից մի նւաղած ձայն «ա՜հ տէր իմ! ես այժմ աւելի թշւառ եմ քան թէ իմ մէջ պարունակւած «թշուառները» ազատիր ինձ»։ Եւ ահա այս կը լինի հանճարի վարձատրութիւնը։ Մենք առանց երկարաբանութեան դիմում ենք մի վերջին խորհրդի նոր ընտիր Փրազեօրներին։ Եթէ կարող են ջանք դնեն գրադարանը նորոգելու, տեխնատեն ըստ պատշաճի կանոնաւոր կերպով ընթերցանութիւն տարածել իսկ եթէ ոչ, թող վաճառեն գրքերը և փողը բաշդեն ուսումնարանի գումարի վրայ... Իսկ անդամները, որոնք ցրւած են զանազան քաղաքներում լիայոյս ենք. որ այնքան բարի կը գտնւեն, որ կը փութան իրենց հաւանութիւնը տալ վերջին խորհրդին։

Խուրշիդ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աստարայ 17 յունիս 95

Կարդալով „Շաւիղ" № 11 համարը ես իմ կողմից պարտականութիւն համարեցի հերքելու այն լուրը, որ ուղղուած է Աստարայի մասին, որ և խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ տեղ տալ «Շաւիղի» համարներից մեկում։

Մի քանի ամիս առաջ տեղւոյս յանձնակատարներից մեկի մօտ կար մի երիտասարդ տղայ, հաստլիկ, միջահասակ թուխ դէմքով, սև կարճ մօրուքով։ Այդ երիտասարդի մէջ մի հիւանդութիւն կար, շաբաթական 2—3 անգամ ուշքից գնում էր և հողերի վերայ թաւալվում։ Մի անգամ նա գնացել էր անտառ զկեռ քաղելու յանկարծ ուշքից գնում է, մօտը ոչ ոք չլինելով գլուխը կպած է եղել ծառի, որովհետև գլխումը մազ չը կար, բաւական արիւն էր գնացել. բարեբաղդաբար մշակներից նոյն տեղով անցնելիս են եղել. տեսնելով նրան շնչասպառ, տուն են հասցնում։ Երիտասարդի խազէյինը բարի մարդ լինելով իսկոյն բերել է տալիս բժիշկ Սպիրիդոնովին, բժիշկը այցելեց երիտասարդին, գլուխը առողջացնելով յետ, խորհուրդ տուեց, որ տաք երկրներում չը պէտք է ծառայէ եթէ ոչ կարող է ցնորւիլ. ուստի երիտասարդի խազէյինը բժշկի տուած խորհուրդը բանաւոր գտնելով տուեց ռոճիկը, 10 թումանն էլ աւելորդ և ասաց գնա արտաբիլ յաւ ամառանոց է և տաք հանքային ջրեր շատ կան, գուցէ այնտեղ օգնէ քեզ։

Ահա վերոյիշեալ երիտասարդի եղելութիւնն է. որ գրել են խեղճ Պարսկաստանից հակ ստացող գործակատարի վերայ, իբր թէ գործակատարի խազէյինը քաղցած է թողել և քաղցածութիւնից ուշքից գնացել է, մշակները տուն են հասցրել. ծովի ափում նաւերին հակ բարձող գործակատարին էլ քաղցածութիւնից 50-ի տեղ 5 է գրել. միթէ գործակատարները Եգիպտոսի Փարաւոնի մօտ գերի ընկած հրէաններն են. դիցուկ խազէյինը հացը ուշ է տալիս կամ քաղցած է թողել, չէ որ գործակատարը ռոճիկ է ստանում, միթէ մի կոպէկ չկար նորանց կրպանում որ տային հացի. իմ կարծիքով ոչ գործակատարը կարող է պարտաւորեալ ծառայել մի խազէյնի և ոչ էլ խազէյինը կարող է ուժով ծառայեցնել մի գործակատարի։ Ես չեմ սխալւում ասել մի գործակատար, ծառայ կամ որևէ ամենաստորին մի ծառայող, եթէ իւր կեանքից իւր ապրուստից իւր ռոճիկից, իւր տիրոջից. գոհ չլինէ չի ծառայել, նոյնպէս և Աստարայի գործակատարները, եթէ խազէյինները քաղցած են պահում, գոհ չեն իւրեանց ապրուստից, կարող են չծառայել, կարծեմ

ուժի խնդիր չկայ և տգիտք էլ չկայ. նա էլ այս լուսաւոր դարում, որ ամեն մարդ ազատ է իւր խիղճին ծառայելու։ Աւելի լաւ է գրել ճշմարտութիւն այլ ոչ զըպարտութիւն։

Մինաս Յարութիւնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկուշաբթի (ամսոյս 17-ին) մեծ շքեղութեամբ կատարեց Ն. Վ. Նասրէդդին Շահնշահի 66-րորդ տարեդարձը, նորա նախնեաց գիշերը քաղաքի մէջ տեղի ունէր շատ փառահեղ հրավառութիւն և լուսավառութիւն Ն. Վեհափառութիւնը ամարանոց լինելու պատճառով, տեղակալում էր Նրան, քաղաքապետ և պատերազմ. նախարար, Ն. Կ. Մեծութիւն Արքայորդի Նայէբ-ոս-Սալթանէն, քաղաքային ցերէմօնեաների և ընդունելութեանց մէջ։

—

Անցեալ կիրակի լոյս երկուշաբթի Ն. Վեհափառութեան տարեդարձի գիշերը երբ Ն. Կ. Մեծութիւն Նայէբ-ոս-Սալթանէն, սովորութեան համեմատ, այցելում էր, լուսավառեալ շուկաներում Թումանեանց վաճառատան (որ աչքի էր զարկում իւր մեծ պատրաստութեամբ) առջևից անցնելիս, Թումանեանց տան ներկայացուցիչները պատիւ ունեցան, հետևեալ բովանդակութեամբ պարսկերէն և Ֆրանսերէն լեզուներով մի ուղերձ մատուցանելու, որը մեծ ընդունելութիւն գտաւ Ն. Բ. Արքայազն իշխանից։

ՁԵՐԴ ՄԵԾՈՒԹԻՒՆ

Մեր Օգոստափառ Տէր, Նասր-էդ-դին Շահնշահ Ղաջարի 66-րորդ տարեդարձի առթիւ, ամենայն խոնարհութեամբ գալիս ենք դնել յոտս Ձերդ արքայական Մեծութեան մեր ամենաջերմ մաղթանքներն, վասն մշտենջենաւորութեան Նորա փառաւոր Թագաւորութեան, բարօրութեանն Նորահպատակութեան և երկարութեան, ու երջանկութեան կենացն Նորին բարձր Վեհափառութեան և իւր Օգոստափառ ընտանեաց, որի՝ հայրական հովանաւորութիւնը տարածվում է իւր բոլոր հըպատակաց վերայ, ի միջի այլոց մանաւանդ Իւր ամենահաւատարիմ հայ հպատակաց վերայ։

Կը համարձակէինք արդեօ՞ք յուսալ որ այս անկեղծ մաղթանքներն, որ իւր հպատակների խորին երախտագիտութեանս, անձնուիրութեան հաւաստիքն են, անինչան պատիւն անգամ պիտի գտնեն մատուցանելու Նորին Վեհափառ Հօր, Ձերդ Արքայական Բարձրութեան ամենահաճ միջոցաւ։

Թող, Ամենաբարձրեալն ունենայ իւր Սուրբ Աջոյն ներքև մեր Վեհաղնի ինքնակալին և Ձերդ արքայական մեծութեան ամենաթանկագին օրերը, և նրանց պահէ երջանիկ և անդորր իւր երախտագէտ հպատակների երջանկութեան համար։

Ձերդ Արքայական Մեծութեան ամենախոնարհ ծառայք

Եղբարք Թումանեանց.

Լաւ է որ Թումանեանց տան պէս մէկ վաճառատուն Պարսկաստանում գոյութիւն ունի, որ այսպիսի դէպքերում ներկայանում հայ վաճառականութեան ... որ շարունակ պարզ են անում իրանց մարդավայել սովորութիւններով։

—

Այս ամսւայ մէջ անժամանակ շատ անձրևներ եկան Թէհրան և Նրա շրջակայ գաւառներից մի քանիսում և եթէ այդպէս շարունակի մի ժամանակ էլ, երկրագործը կը զրկուի իւր ամբողջ մէկ տարւայ արդիւնքից— հացահատիկներից քանի որ դեռ հունձը չը կալսած սկսել է ծլել։

—

Թէհրանայ շրջակայ գաւառներում կաթնատու կենդանիների մէջ հիւանդութիւն է ընկել, մեծ քանակութեամբ կով և ոչխար են կոտորվում։

—

Յայտարարվում է «Շաւղի» այն բաժանորդներին, որոնք մինչև այսօր չեն վճարել, իրանց բաժանորդագինը, աճապարեն մեզ շուտով հասցնել մեր պահանջը։

—

Խոյից մեզ գրում են հետևեալն։ Ամսիս 9-ին առաւօտեան ժամ 1-ին տեղումս սաստիկ երկրաշարժ եղաւ մօտաւորապէս մի րոպէ տևեց, բարեբաղդաբար վնաս չի եղել։ Այս շարաթ տեղացող անձրևից եղանակները մեզ մօտ յանկարծ բաւական իջաւ, այժմ գրեթէ աշնանային եղանակ է, հունձը կանգ է առել թացանելու պատճառով։

—

Արտաբիլից գրում են հետևեալը, յուլիսի 1-ին քաղաքումս պատահեց մի տարօրինակ դէպք. կէս օր 10-ի չափ Թափառական կին բօշաներ մտնում են մի հայի տուն. երբ տեսնում են տանը ոչ ոք չկայ բացի մի մանկահասակ կնոջից, իրենց յատուկ խորամանկութեամբ սկսում են զրոյցներ անել կնոջ հետ, երբ կինը բարկանում է որ դուրս գնան տնից՝ մի քանիսը բռնում են կնոջ և ամուր սեղմում իրենց մէջ, իսկ միւսները սկսում են արկղիկները և սնդուկները բանալ իրենց բանալիներով, երբ մանկահասակ կինը ճիչ է արձակում և ընդդիմադրում է, բօշաները խեղդելու փորձ են փորձում, տանը միւս սենեակում պառկած է լինում կնոջ սկեսրայրը. Հարսի գոռում կոչումից արթնանում է և գալիս միւս սենեակը տեսնում է, որ հարսին ուզում են խեղդեն և միւսները արկղները ուզում են բաց անել, կանգնում է դրան սեամին վրայ և ասում, «կորէք դուրս, անզգամներ. քանի ձեռքս չի կպել ձեզ» բայց նրա չի մտնում կիսաշունչ կնոջ ազատելու. մի քանի անգամ նոյն խօսքը կրկնում է մինչև դրացիները օգնութեան են հասնում և ազատում խեղճ կնոջ։

—

Պաշտօնական «Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ Կովկասի կառավարչապետի մօտ գտնվող սահմանակից յարաբերութիւնների դիպլոմատիկական պաշտօնեայ, կայսերական պալատի կամեր-իւնկեր Շչեգլով նշանակվել է Թէհրանի դեսպանատան առաջին քարտուղար։ Մենք կարող ենք աւելացնել, որ այս վերջին պաշտօնը մինչև այժմ վարում էր Շպէյեր, Ճապոնիայի ռուսաց դեսպանատան նախկին առաջին քարտուղարը։ Շչէգլովի նշանակումը կարող է օգտակար լինել այն տեսակէտից, մանիկ նորա ծանօթ լինելով ռուսաց և պարսից սահմանակից գործերի, մի քանի սահմանակից Թափառական ցեղերի և աշիրաթների խնդիրները շուտով լուծում կըստանան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

—

Շուշի. 6 յուլիսի 95

Անցեալ ամսին կայացաւ Ղարաբաղի դժբաղդ թեմական դպրոցի տարեկան հանդէսը։

Ձեզ յայտնի է, որ անցեալ տարի նախկին թեմական առաջնորդ՝ Կարապետ եպիս. Այվազեանի և մի քանի սևահոգի մարդկանց ինտրիգների պատճառով դպրոցի տեսուչ պ. Լևոն Սարգսեան, ամբողջ ուսուցչական խումբը և ամբողջ հոգաբարձութիւնը (որ պաշտպանում էր պ. տեսչին) հրաժարվեցին իրանց պաշտօններից։ Շատ կ՛երկարանար մեր նամակը, եթէ մենք մանրամասն նկարագրէինք անցեալ տարւայ խառնակութիւնները. միայն երկու խօսքով ասենք, որ Այվազեանը նրա համար էր թշնամացել տեսչի հետ, որովհետև վերջինս նրան դուր չէր գալիս, և ահա թէ ինչու։ Պարոն տեսուչը պահանջում էր առաջնորդարանից մի քանի սենեակներ տալ դպրոցի համար, որովհետև եղած սենեակները քիչ էին (առաջնորդարանը կից է դպրոցին)։ Միջանկեալ ասենք, որ պահանջած սենեակները առաջներում դպրոցի դասարաններն են եղել։ Բայց Այվազեանի նման մարդիկ դպրոցի և առհասարակ հասարակական շահերով այնքան են հետաքրքրըվում, որքան դուք, ընթերցող, չինական տառերով. նա չէր տալիս սենեակները, որոնց տուել էր իր եղբօրը, որ սա ապրի այդտեղ։ Պարոն Սարգսեանը նոյնպէս պահանջում էր, բացի փոքրութեան պատճառով, որ Այվազեանը յանձնի դպրոցին դպրոցի պարտէզը, որը նոյնպէս առաջներում դպրոցի դրամադրութեան տակ է եղել։ Բայց նա այդ պահանջն էլ է մերժում, և պարտէզը իւր ձիանների համար ախոռ է դարձնում։ Բացի դորանից, Այվազեանը ցանկանում էր, որ տեսուչը տարկի նման վարուի իւր հետ և այն անի, ինչ որ ինքն է կամենում, բայց տեսուչը ի հարկէ այդ չէր անում։ Ահա այս պատճառներով Այվազեանը թշնամացաւ տեսչի հետ և սկսեց զրպարտել նրան և ուսուցիչներին։

Հեռացան դպրոցից և բարձր դասարաններից շատ աշակերտներ, որովհետև նրանք լաւ գիտէին, թէ Այվազեանը պ. Սարգսեանից յետոյ ինչ ուսուցիչներ պիտի հրաւիրէր։ Նոր ուսուցչական խումբ կազմւեց, այնպիսի մի խումբ, որ արժանի չէր նոյն իսկ մի ծխական դպրոցի համար։ Տեսուչ հրաւիրւեց Եղիշէ Մադաթեանը. որ պ. Սարգսեանից առաջ երկու տարի „տեսուչ“ է եղել և այդ երկու տարւայ ընթացքում ցոյց է տուել, որ ինքը բոլորովին անընդունակ է տեսուչ լինելու մի միջնակարգ դպրոցում։ Այս պարոնը նրա համար հրաւիրեց, որովհետև նա ինչպէս ուզէր այնպէս էլ սա կը պարէր, ժամանակաւոր հոգաբարձութիւնը այս տեսակ մարդ էր ուզում, և այդ կողմից աջող ընտրութիւն արաւ...

Ահա այս Մադաթեանը հանդէսի ժամանակ կարդաց դպրոցի տարեկան „հաշիւը“։ Պարոնը, չը կարողանալով փաստերով պախարակել պ. Սարգսեանի գործունէութիւնը և ցանկանալով անպատճառ անուանարկել թէ պ. Սարգսեանին և թէ նրա ուսուցչական խմբին, սկսեց զանազան կլօունութիւններով ծաղրել նրա ուսուցիչներին։ Պ. Մադաթեան, դուք չէք հաւանում պ. Սարգսեանին, մինչդեռ դուք դեռ „գուվերնեօր“ ունենալու կարօտ էք... Դուք, որ ձեր աւաջւայ տեսչութեան ժամանակ օրինաւոր մատեաններ անգամ չէք ունեցել դասարաններում, ինչպէս էք համարձակվում ծաղրել պ. Սարգսեանին։ Հէնց ձեր ուսուցիչներից մէկը, որ փոքր ի շատէ հասկացող մարդ է, ասում է, որ ձեզ չէ կարելի նոյնիսկ 10 հաւ յանձնել և ոչ թէ մի թեմեկան դպրոց։ Դուք գովում էք մի ուսուցչի, որ մի կէրպ աւարտած լինելով ռէալական դպրոց, աւանդում է Ֆիզիկա և ուրիշ առարկաներ, աւանդում է, թէև ինքը նոր պէտք է սովորի այդ առարկաները, և ոչ թէ ուրիշներին սովորեցնի... Բայց դուք գովում էք նրան, որովհետև ձեզ ազգական է։ Շատ ազնիւ մարդ էք, չէ՞։ Մի ուրիշ բթամիտ ուսուցիչ ունիք, որ սովորել է Էջմիածնի ճեմարանում, աւանդում է բարձր դասարաններում... ալգեբրա։ Ա՞յս ուսուցիչներով էք ծաղրում պ. Սարգսեանի ուսուցիչներին, որոնք պատիւ կարող էին բերել ամեն մի դպրոցի և որոնք բարձրագոյն և միջնակարգ ուսում ստացած մարդիկ էին։

Շուշեցի.

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

—

Թիֆլիզ. 18 յունիս 95

Բագուից ոչինչ չը գրեցի, որովհետև այդ քաղաքի մասին շատերին յայտնի է, համառօտ էլ գրել՝ քիչ կը լինէր։ Նէֆտ նէֆտ և նէֆտ, ահա այդ քաղաքի ամէն ինչի կենդրոնը, որի շուրջ է դառնում կեանքը, նրա գնի հետ ոյժ է ստանում կամ թուլանում։ Նէֆտը հաւասարացնում է մտային կարողութիւններն իսկ, որովհետև ամէն ինտելիգենտ երբ մտաւ նէֆտային գործունէութեան հոսանքում, նա վաղ թէ ուշ ծալում դնում է մի կողմ մտային պիտոյքները և իր երազն ու զբաղումը միայն նէֆտի մէջ է կենդրոնացնում։ Մի շրջանում մի խօսակցութիւն, որ նէֆտի վրայ, չը դառնայ յարատևել չէ կարող. եթէ խօսակցութիւնը սկսի Աստուծոյ վրայ, անզգալապէս, մի քանի րոպէից յետոյ կիջնի դէպի նէֆտը և գիտեցէք, որ նէֆտային խօսակցու-

թիւնները եթէ ժամեր իսկ տևեն, չեն ձանձրացնի ոչ մի բագուցոյ։ Բնական էլ է այդ երևոյթը. նէֆտը այն հեղուկն է, որ արիւնն է կազմում տեղական կեանքի։ Նէֆտի գինը թանգացել է, տենդն էլ աւելացել, ամէնքը, աշխատում են գետինը ծակել և այդ գորշ հեղուկից ունենալ. կոյր բաղդը մի օրուայ մէջ կարող է մէկին միլիոնատէր շինել մի նէֆտի շատրւանով և կամ օրուայ հացի կարօտ շինել եթէ հազարներով փորուած խորը փչանայ։ Ցանկարծակի (jeu du hazard), դիպուածական խաղի նման է. ընկնել կամ բարձրանալը դէպքի (hasard) բան է։ Կեանքը ոչ մի տեղ այնքան տենդային, այնքան եռացող չէ, որքան Բագվում։

Երէկ հասայ Թիֆլիզ և առաջին անձի երեսը որ տեսայ, թէ հրանցու երես էր. բայց փողոց ելայ և ծանօթներիս էլ հանդիպեցի։ Մի ինչ որ քայլի հոտ է փչում այստեղի երիտասարդութիւնից. պառաւացած աղջիկների տպաւորութեան թողնում. չնչին, ծթռած կրկնութիւններ, սչնչութիւնով ոգևորուող կամ պրստիկ բաների վերայ վիճաբանող. միմիանց հայհոյող, միմիանց աւազակ խարդախ կոչող—ահա այն երիտասարդութիւնը, որ քիչ յետոյ պառաւութեան է դառնալու, անցնելու է այն փազը, որ պրօլէտարիից արիստոկրատութիւն անցնող միջակէտն է կազմում—(բուրժուազիայի)։ Այդ անցքի մէջն է գտնում Թիֆլիզի երիտասարդութիւնը։ Կռվում են և չ'ունենալով ընտիր զէնքեր, իրարու փողոցային ածականներով են պատվում։ Կռիւը գաղափարների վրայ լինէր գոնէ, ոչ, անձնական է դարձել. նոյն իսկ ամենակարևոր, կենսական հարցերում Կիրակոսեաններ ու Մարկոսեանները կուռք են շինել իրենց պետերին Կիրակոսին և, Մարկոսին և անասելի զրպարտութիւններ են տեղում միմիանց վրայ։ Խարդախներ են, հաւաքած փողերը ուտում են, շռայլում են, գոչում են Մարկոսեանները։

—Ո՞վ է շատ գործել, մե՞նք թէ նրանք. մենք մեծամասնութիւն ենք կազմում. նրանք փողերը փչացրին և այլն և այլն, ձայնում են Կիրակոսեանները։ Իսկ այդ կռիւներից վնաս է կրում գործը, զզվում են անձնանուէր, ազնիւ գործողները, քաշվում ասպարէզից և թողնում, որ երիտասարդ պառաւացողները միմեանց մազ փետեն ու գործը իրենց անձնական սնափառութեանը զոհ տան։ Եւ դրանք, այդ բոլոր կռվողները ոչ այլ ինչ են եթէ ոչ գաղափարը իբր զէնք գործածող բուրժուաներ, դատարկ փամփշտահարներ։ Ափսոս... սուրբ գործի մէջ անգամ շառլատաններ, հոտած անձեր, մամոնայի համար իրենց ծախող անհատներ է որ վխտում են։ Բայց այդ բոլորին ես երիտասարդութիւն կոչեցի միայն այն ի նկատի ունենալով, որ նրանցից շատերի մազերը դեռ սև են, կամ ալեխառն, ապա թէ ոչ նրանց ձգտումներն ու գաղափարները այնքան լճացել են, բերնից հոսած մտքերը այնքան ճմլուած թղթերի տպաւորութիւն են թողնում, այնքան դռեհիկ (banale) են դարձել, որ մի քանի տարիից յետոյ հարկաւոր է նրանց բոլորին ժողովել և «հին սերունդ» կոչուող արխիւի մէջ ածել։ Կանգ են առել թշուառները, կարծելով որ հասել են դպաթնակէտին. սովորած ու անգիր արած ֆրազներ ու մտքեր են կրկնում մեզ և ապա, իրենցից բացի ամենքին տիրացուներ կամ «նախիրայիններ» համարում, որովհետև յաջողուել է իրենց մի քանի նոր բաներ սերտել և նրանով օրիժինալիտէ—բընորոշութիւն ստանալու յաւակնութիւնը ունենալ։ Երբեմն այնպիսի արհամարհող լրբութեան են հասնում, որ իրենց բերնից դուրս եկող լաւ մտքերն իսկ զզուելի են դարձնում. համեստութիւն ասած բանը չը կայ և այդ՝ նրանց յետագնացութեան, նրանց հոտելու, պառաւանալու նշանն է, եթէ միայն երբէք եղել են երիտասարդներ։ Համեստութիւնը զարգացողութեան, գիտնականութեան հետ առնչական է, և լրբութիւնը, մտնաւանդ մտային լրբութիւնը, խորին տգիտութեան և դօնքիշոտութեան նշան է միայն, նշան, որից շատ կը տեսնէք Թիֆլիսի, դեռ երիտասարդ կոչուող թշուառների վրայ։

Իսկ բուն երիտասարդութիւնը, որ փթթեցնում է իր ձգտումների կոկոնները, որ մղումն ունի ուսանելու, շարժուելու, որ համեստութիւն ունի իր կեանքի աշխոյժի հետ—այդ երիտասարդութիւնը նոր սկսվում է կազմել. նա դեռ թոյլ է դեռ ոտի տեղ չէ գտել, դեռ նրա ուսկրները չեն պնդացել։ Բայց նա նշմարվում է, մօտ է գալիս, համախմբվում է, նեցուկ է փնտռում և սպառնում է դէպի պառաւութիւնը ընթացող՝ մտային բուրժուազիային։

Այդ երիտասարդութեան է անշուշտ ապագան. նա պիտի խորտակի ժայռը և ճակատագրականապէս առաջ գայ։ Նա գործում է այժմ էլ, բայց շատ աննշան, թէև աշխոյժ, թարմ. մինչ հնութեան դիմող մտային բուրժուազիան չունի այլ ևս ոչ թարմութիւնը ոչ աշխոյժ. նա բաժանուել է ֆրակցիաների, անձնաւորութիւններ են անցել ֆրակցիաների գլուխը, և պառաւ աղջիկների պէս՝ միմեանց մազեր են պոկ տալիս։

Հները իսօ հնացել են, բոլորովին չեն երևում. կան մի քանիսներ, նրանք էլ երբեմն իրենց քայքայուած մտքերով ծիծաղ և զզուանք են շարժում, որովհետև այնքան անմիտներ են, որ ուզում են կռիւ մղել նոր հոսանքի դէմ։

Այդ է առ այժմ Թիֆլիսի հայ ինտելիգենտութեան պատկերը. մտային բուրժուազիան է ասպարէզի տէրը, արիստոկրատիան երբեմն իր ատամներն է ցոյց տալիս, իսկ նոր—ճշմարիտ երիտասարդութիւնը դեռ թոյլ է, հազիւ նշմարելի։

Հայոց կաթուղիկոսի դէմ գայրոյթը ընդհանուր է եղել։ Այն վարմունքը որ նա ունեցել է հայկական հարցի վերաբերութեամբ—միանգամայն աններելի է. այդքանը թող հերիք լինի հասկացնելու համար ամեն ինչ։ Կրթական և հասարակական գործերի մէջ էլ ոչ պակաս անտանելի է եղել նրա ընթացքը։ Մանրամասնութիւններ աւելի յարմար առիթով։

Վ. Փ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասի թերթերը սխուր լուրեր են տալիս մեզ հետգհետէ ոչ միայն հայկական հարցի վերաբերմամբ, այլ և մեր հասարակական գործերի մասին։ Հայկական հարցը այժմ մի քամիի է նմանում որ ոչ մի ուղղութիւն չ'ունի. երբեմն կարծում ես որ ահա վճռուեց, երբեմն կարծած ես համարում։ Սօլզբրիի նախարարութիւնը յուսահատեցնում է մարդու. բայց երբ անգլիայի պատմութեան անցքերը միտդ բերելով, յիշում ես որ Անգլիայում յաճախ հասարակական կարծիքի բռնութիւնը վատ մինիստրների լաւ գործեր է անել տալիս և երբ լրագիրներից եզրակացնում ես որ Անգլիայում այժմ, հասարակական կարծիքը շատ ոյժ է սասցել հայկական հարցի մասին և պահանջող—այն ժամանակ մտածում ես թէ, ով գիտէ, գուցէ այդ կարծիքը ստիպի Սօլզբէրիին լաւ քայլեր անելու։ Ամենակրիտիկական վարկեաններումն ենք. հայկական խնդիրը կամ աչնչանալու է կամ լուծուելու այս մօտ օրերս. մարդ որոշ ոչինչ չէ կարող ասել, չը նայելով որ շատ լրագիրներ ճգնում են գուշակութիւններ անել։ Հայոց կաթուղիկոսին էլ հօ, Ասատուած իրեն մեծ շնորհքներ պարգևէ, Պետերբուրգում սքանչելի ճառեր է արտասանում և ռուսաց լրագիրները այսպիսի խօսքեր են ասում այդ ճառի վերաբերութեամբ, «հայոց ազգի ներկայացուցիչը մենք ճանաչում ենք կաթուղիկոսին, եթէ նա պնդում է, որ հայերի միակ (շեշտած է այս բառը) պաշտպանը Ռուսիան է, ուրեմն ովքեր են Լոնդոնի այն հայ ազիտատորները, որոնք անգլիական պաշտպանութեան տակ են մտել կայլն կայլն։ Սրա վերայ ոչ մի խօսք աւելացնել պէտք չէ ռուսաց թերթերի այդ յօդուածը արտատպուած են թարգմանաբար. Կովկասի հայ թերթերի մէջ։ Հայոց կաթուղիկոսը շուտով էջմիածին կը վերադառնայ։

*** Եւ որովհետև նա վերադառնում է, պարտք է համարում իր ճանապարհից հեռացնել բոլոր «մեղաւոր» եպիսկոպոսներին և նրանց ուղարկել վանքերում ապաշխարելու, իսկ նրանց փոխարէն դնում է «արդարների» «աղնիւների»։ Եւ ահա բազմաշարշարն Ստեփանէ եպիսկոպոսին նորից շղրտում են Ս. խաչի խոր վանքը ճգնելու և իր ունեցած աշխոյժն ու եռանդուն գործունէութիւնը այնտեղ թողնելու։ Սիրտ սրբազան, տեսնում ես որ եռանդուն գործունէութիւնը սիրելի չի վեհափառին, ինչու անմտութիւններ չես գործում դու էլ որ սիրելի դառնաս։ Երևանի թեմի առաջնորդն էլ ուղարկվում է Տաթև որպէս «ամառանոց», իսկ բեռազրերի քարեր փնտռող Մեսրոպը վարդապետը, պիտի լինի սինոդի աւագագոյն անդամը սրբազան Երեմիայի փոխարէն։ Երիս. եպ. Սեդրակեանին ուղարկում են Առարատան։ Էլի մեծամեծ փոփոխութիւններ, որոնք անշուշտ մէկ, կամ շատ շատ մի քանի ամիսներ են տևելու։ Հայոց նոր կաթուղիկոսը նորութիւն շատ է սիրում, չէ որ ինքը միշտ սիրում է ասել որ անշարժութեան թշնամի է։

Վ. Փ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն. 25 յուլիս. Ճարտնիան Զինասատանից 7 և կէս միլիոն ֆունդ ստերլինգ է պահանջում Լիաթունգ թերակղզին թողնելու համար. վերջերում Փեքինում ստորագրուած ֆրանքօ չինական դաշնաթուղթը ֆրանսիացիների վաճառականութեան առաջ բացել է մի քանի հարաւային նաւահանգիստներ, ուր ֆրանսիացիք իրաւունք կունենան կոնսուլներ ունենալու, դաշնաթուղթը տալիս է նրանց հանքային իրաւունքներ, Հարաւային նահանգների մէջ և ազատագին նաւարկելու Լօհօ և Մէկոնֆ գետերի վրայ։

Կ. Պոլիս. 25 յուլիս. Սուլթանը ընդհանուր ներումն է շնորհել բոլոր հայ քաղաքական յանցաւորներին։

Հռոմ. 25 յուլիս. Բարոն Բլունկ արտաքին գործոց նախարարը խօսելով այսօր պատգամաւորների սենեակում ասաց թէ, Ռուսաստանը այնպէս յայտնել է որպէս թէ ինքը կրօնական շահեր ունի Աբիսինիայի մէջ. ասաց որ Մենելիքը իւր գահը պարտական է Իտալիային բայց վճռած է իւր այդ պարտքը մատնելով նորա շահերը։ Պատասխանում է Իտալիայի ու Մենելիքի մէջ մի տեսակի հաւանականութեան վրայ։

Տօկիօ. 28 յուլիս. աղետալից մի դէպք տահեց մի շոգեշարժ կառախումբի, որով հիւանդ զինուորներ Հիրոշիմայից վերադառնում էին Քօբէ։ Երկաթուղու դիծը բաւական տեղ երթում է ծովի ափով. Կառախումբի առաջին մասը դուրս նետուեցաւ գծից և կաւ ծովի մէջ. 140 հոգի խեղդուեցան։

Սոֆիա. 29 յուլիս, Դեռ շարունակուում է այն զզուումը, որի պատճառն էր մակեդոնական ապստամբների համար կուող հայ զինուորների մահը։ 11 բուլգարական պատգամաւորներ հրաժարուած են իրենց գործից կեդոնիայի ապստամբների հետ միանալու համար։

Ս. Պետերբուրգ 29 յուլիս. «Նովոյէ Վրեմեան» հրատարակում է մի հեռագիր Լատի-Վոստոկից յայտնելով թէ, Ծաղոնը պատրաստում է իւր բանակը և նաւատորմիղը պատերազմի համար թէ. նա կործանել է Պորտ-Արթիւրի ամրութիւնները. և այժմ սպասում է Գօրէային և մտածում է թագաւորների բռնել։

Հռոմ. 30 յունիս. Երեկ գիշեր պատգամաւորների սենեակում տեղի ունեցած վիճաբանութեան մէջ Աբիսինեական հարցի մասին Ֆասպին յայտարարեց հետևեալը, որ Էրիթրիան, Լեռնադաշտը և Թիգրի երկիրը պատկանում են Իտալիային և թէ իտալական կառավարութիւնը վճռած էր հետ դարձնել այդ հողերը։ Նա աւելացրեց թէ թագաւոր Մենելիքը ամրացած էր իւր դաշնակցութիւնը Իտալիայի հետ պահել։ Սինիոր Աքիալին, ասաց դրոշին գտնուում է Աֆրիկէում և Իտալիայի ճշմարիտ շահերը պիտի պաշտպանէ։

Ս. Պետերբուրգ. 30 յուլիս. «Moscowsky Gazette» իւր օրվայ թերթի մէջ խօսում է ռուսական արշաւանքի մասին դէպի Հնդկաստան։ Այդ արշաւանքը, նա ասում է, թէ այժմ դադարեցուած կը լինի բայց կատարելապէս իրագործելի։ Մինչև անգամ անհրաժեշտ եթէ Մեծն Պետրոսանիան շարունակէ հակառակել Ռուսաստանին ամեն դէպքում. այնուամենայնիւ Անգլիան ցանկանում է ունենալ փոխադարձ և նպաստաւոր յարաբերութիւններ Ռուսաստանի հետ, Ռուսաստանը ամեն պատրաստութիւն ցոյց կտայ նորան օգնելու պէտքի նա ամրացնէ հարաւային Ասիայում նեցած իւր երկիրները, մի բան՝ որի դէմ Բրիտանիան միշտ պնդած է թէ Ռուսաստանի պրոգրէսներ է յարուցանում։

Լոնդոն. 31 յուլիս «Թայմզի» Սոֆիայի թղթակիցը յայտնում է, որ Մակեդոնիայի ապստամբական շարժումը անյաջող է եղել դեռ մի քանի բուռն կռիւներ տեղի են ունենում սահմանագլխի վերայ։ Թայմզին յայտնում են որ Գլատստոնը պիտի խօսէ Հայկական հարցի մասին մի ժողովում, որ պիտի գումարուի Շեստրում օգոստոսի 6-ին։ Վարչապետի դուքսը պիտի նախագահէ ժողովը և ներկայ պիտի լինին ուրիշ շատ ազգեցիկ անձնաւորութիւններ, որոնց մէջ և Սալիսբրին։

Կ. Պոլիս. 1 օգոստոս. Դեսպանները յայտնել են իրենց հաւանութիւնը այն առթիւ Զաբիր փաշան նշանակել է Հայաստանի բարենորոգումները գործադրելու բայց պայմանաւ, որ նրան տրուի լիագօր իշխանութիւն և որ Սուլթանի Ռէֆորմների ծրագրաւարացուցիչ դտնուին կառավարութեան կողմից։

Ըրտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ